

Արմաւիրեցիք հայկական սրամտութիւնը, քաջասրտութիւնն ու բարեկամութիւնը պահած են. բայց շատը ցորենագոյն ըլլալու տեղը՝ Ձերքեզներուն պէս քիչ մը դեղնագոյն են : Ծերերը գլուխին ու մօրուքին բոյորովին կածիլեն, իսկ երիտասարդները մագոտ ու մօրուաւոր են : Քաջասրտութեան կողմանէ Ձերքեզներէն վարջեն մնար, մանաւանդ քե անոնցմէ ալ վեր են, ինչպէս որ յայտնի է նաեւ շատ մը ստոյգ պատմութիւններէ որ կը պատմուին մեջերնին : Օրինակի համար, Կեօքջայ օղլու անունով երկու եղբարք կան եղեր վաճառական, որ վաճառքով իրենց քաղաքը դարձած ատեննին եօրը հատ Ձերքեզ աւագակներու հանդիպեր են : Ասոնք ստիպեր են որ Հայերը ինչ որ ունին՝ իրենց տան. Հայերն ալ իջեր են ձիերնէն վար ու իրարու ետեւէ անոնցմէ չորս հոգի մեռուցեր են, միւս երեքն ալ այն տեսնելով ձգեր վախեր են : Այս անցքը քաղաքին մէջ տարածուելէն ետեւ՝ մինչեւ Ռուսաց Ձաս զօրապետին ականջն ալ հասեր է, եւ անկալ ստուգեր ու տերութենէն մշյմէկ արծթէ մետալ բերել տուեր է Կեօքջայ օղլու եղբարց :

## ՓԱՐԻԶԵԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ ԱՆՅԵՑ ԱՆՅԵՂՈՅ Ի ՅՈՒՂԻՍԷ 1855 ԱՄԻՆ ՅՅՈՒՂԻՍ 1856 :

1855. — ՅՈՒՂԻՍ

1. Անտոն Ռոզմինի իմաստասեր երեցն խալացի մեռանի ի Սրբէզա առ Մաճիմքէ ծովակաւ :

2. Կայսրն Նափոյեռն յօրենադրաց ժողովին ստեճաբանեալ՝ յայտ առնէ զտրտութիւն իւր ընդ անագանէլ հաշտութեան, եւ գլխաման ի ժողովել զրամ եւ զօր բաւական ի պէտս պատեւրագմին :

8. Ուիլյեմ Եղուարդ Փառի, նաւագնաց ուղեւոր ի ծովս հիւսիսոյ, մեռանի յէմս քաղաքի :

11. Մովսէսեան Ռուսաց Պօղոս Նաբիմով կարեւիւր խոցեալ ի Սեւասթոփոլ՝ մեռանի ի վաղիւ անդր :

12. Դաշն բարեկամութեան եւ վաճառականութեան ի մէջ Դաղդիացոց եւ Պարսից՝ հաստատեալ ի Թեհրան :

21. Դանիէլ Արքերպով՝ քերթող շուետացի՝ մեռանի ի Սրբոյմ :

25. Սասանութիւն ընդ ամենայն երկիրն Զուիցերաց, եւ մանաւանդ ի վիսիտերբալ գաւառի, յորմէ զղրդին փոքր մի եւ կողմանք ինչ Դաղդիոյ, Լոմպարտիոյ, եւ Դերմանիոյ :

ՕԳՈՍՏՈՍ

8. Գուլիէլմոս Փէփէ զօրավար խալացի մեռանի ի Թուրքին :

9. Նաւատորմիդր Դաղդիացոց եւ Անգլիացոց ուժակոծեալ զմասն ինչ Սվետպորկ քաղաքի՝ հրդեհէն տուեալ բանի մի փայտակերտս, եւ յետ երից աւուրց մեկնեալ ի բաց զնան :

բարք կան եղեր վաճառական, որ վաճառքով իրենց քաղաքը դարձած ատեննին եօրը հատ Ձերքեզ աւագակներու հանդիպեր են : Ասոնք ստիպեր են որ Հայերը ինչ որ ունին՝ իրենց տան. Հայերն ալ իջեր են ձիերնէն վար ու իրարու ետեւէ անոնցմէ չորս հոգի մեռուցեր են, միւս երեքն ալ այն տեսնելով ձգեր վախեր են : Այս անցքը քաղաքին մէջ տարածուելէն ետեւ՝ մինչեւ Ռուսաց Ձաս զօրապետին ականջն ալ հասեր է, եւ անկալ ստուգեր ու տերութենէն մշյմէկ արծթէ մետալ բերել տուեր է Կեօքջայ օղլու եղբարց :

12. Հրաման զօրաժողովոյ ի մետասան նահանգս Ռուսիոյ՝ 23 այր առ հարիւր :

16. Ճակատամարտ կամրջին որ ի Թրաքիի. Ռուսք 60, 000, որոց զօրավարէ յաշում բեւին Ռիտ, եւ ապա ինքն իսկ Կորչարով, եւ ի ճախումն Լիվրանտի, յարձակին ի վերայ դաշնակցաց առ Չեռնայա գետով, եւ ի բաց վանին ի Դաղդիացոց եւ ի Սարտենիացոց՝ որոց զօրապետին Փէլիսիէ եւ Լա Մարմոնրա :

18. Դաշնագիր միաբանութեան ընդ պապն Հռովմայ եւ ընդ կայսրն Աստրիոյ, որով բազմապատիկ ազատութիւնք շնորհին յԱստրիա հռովմեական ժողովրդոց :

— Դշխոյն Անգլիոյ հասանէ ի Փարիզ, եւ ի 28 ամսոյս դարձ առնէ անդրէն յԱնգլիա :

22. Պատրիարքն հռովմեական Յունաց Մաքսիմոս Մազլլւմ վախճանի յԱդրեսանդրիա ի հասակի 87 ամաց :

ՍԵՊՏԵՄԲԵՐ

3. Մարտ եւ յաղթարիւն Ռուսաց առ Կարուց քաղաքան ի Հայս :

5. Սկիզբն ուժակոծութեան ամրոցին Մայաքովի 700 բնդանօրիւր :

8. Առումն ամրոցին ի Դաղդիացոց հանդերձ ահազին կոտորածիւ յերկուց կողմանց :

9. Ռուսք հուր հարեալ ի մի կողմն կիսաւեր քաղաքին Սեւասթոփոլի, եւ զնաւս իւրեանց ծովասոյգ կո-

բռնեալ, մեկինն ի հիսխակողմն. որով եւ բուն քաղաքն Սեւասրփով անկանի ի ձեռս դաշնակից բանակաց:

12. Կայսրն Ռուսաց ուղեւորի ի Փերրպուրկէ գնալ ի տեղիս պատերազմին:

16. Տոն Փետրոյ արքայ Փորթոկալի բազառեալ՝ երդնու հաստատուն պանել զսահմանադրութիւն աշխարհին:

24. Արշաւան դաշնակցացն ի Թաման եւ ի Ֆանսկորիս:

29. Ռուսք առաջնորդեալք ի Մուրաւիէվ զօրապետեն՝ յարձակին յառուսն Կարուց, եւ յետ պատերազմելոյ ժամս Էօրն ի բաց վանին ի Տաճկաց, կորուսեալ արս աւելի քան 7000:

#### ՀՈԿՏԵՄԲԵՐ

5. Լուրեր աստեղաբաշխ գերմանացի գտանէ ի Պիք քաղաքի գնոր մոյորակն Ֆիտես. եւ յ9 ամսոյս Կոլտըմիք գտանէ ի Փարիզ գմորակն Ատալանտա:

7. Նաւատորմն Գաղղիացոց եւ Անգղիացոց մեկնեալ ի Գամբըէ, ի վաղիս անդր յերեսան զայ հանդէպ Օտեսալի:

9. Հաստատութիւն ի Նանկասարի դաշինն կռելոյ ընդ Անգղիացիս եւ ընդ արքայն Ճափոնի ի 14 հոկտեմբերի 1854 ամին, յաղագս մուտ գտանելոյ նաւուցն Անգղիացոց ի նաւահանգիստս աշխարհին:

15. Զօրածողով ի նահանգս ինչ աշխարհին Ռուսաց 10 այր ի հագարէ:

— Ելք դաշնակից զօրաց ի ցամաք հանդէպ Գըլպուրուհի որ է մերձ յՕգուս. զոր եւ առնուն յ17 ամսոյս եւ գերեն Ռուսս 1400:

18. Ռուսք քանդեալ կործանեն զամուրն Օգուս:

#### ՆՈՅԵՄԲԵՐ

2. Կայսրն Ռուսաց գնաց յՕտեսաւ. դառնալ ի Նիքոլայէվ ի 5 ամսոյս, ապա երբայ ի գնին Սեւասրփովի, եւ յ18 սորին դարձ արաբեալ հասանէ ի Փերրպուրկ:

6. Էօմեր փաշա սպարապետ Օսմանեանց անցանէ ընդ Ինկուր գետ եւ վանէ զՌուսս, որ մեկինն ի Խուրայիս:

11. Զօրավարն Սիմփսըն բողոս գերամանատարութիւն անգղիական բանակին Խրիմու ի ձեռս Գնտրինկըն զօրավարին:

— Կործանումն ետոյ քաղաքի ի Ճափոն յերեսաց անագին սասանութեան երկրի:

15. Կայսրն Նափոլեոն կատարէ զհանդէս բաշխման վարձատրութեանց առ այնոսիկ որ արժանաւորք վկայեցան ի համաշխարհական արուեստահանդիսին Փարիզու:

— Դաշն միաբանութեան՝ աստի ընդ մեջ Գաղղիոյ եւ Անգղիոյ, եւ անտի արքային Շուէտաց:

23. Գալուստ արքային Սարտենիոյ ի Փարիզ. յ30 ամսոյս ուղեւորի ի Լոնտոն, եւ ի 11 դեկտեմբերի դարձ առնէ անդրէն ի Թուրին:

26. Ադամ Միցքէվիչ՝ մեծանուն քերթողն Լեհաց մեռանի ի Կոստանդնուպոլիս:

28. Զօրավարն Ռուսաց Մուրաւիէվ առնու զԿարս քաղաք եւ ի գերութիւն վարէ զՎասըֆ փաշա, զգորապետն անգղիացի Ուիլիէմս, եւ զամրականսն առ հասարակ:

30. Փակումն եւ աւարտ արուեստահանդիսին Փարիզու:

#### ԴԵԿՏԵՄԲԵՐ

10. Նաւատորմիդք Գաղղիացոց եւ Անգղիացոց բառնան զպաշարումն նաւահանգստից Պալրիական ծովուն:

18. Սամուէլ Ռոճըրս քերթող անգղիացի մեռանի ի Լոնտոն ամաց 95:

#### 1856. — ՅՈՒՆԻՈՒԱՐ

6. Քանդակագործն գաղղիացի Դաւիթ տ'Անժէ մեռանի ի Փարիզ:

12. Աստեղաբաշխն Շարոնոնք գտանէ ի դիտանոցէն Փարիզի գնոր մոյորակն Լետով:

15. Փոփոխութիւն ոստիկանաց պետութեան ի Սպանիա:

16. Պետութիւն Ռուսաց յանձն առնու զպայմանս հաշտութեան առաջարկեալս յԱստրիոյ:

21. Իշխանն Կիքա հրատարակէ զազատութիւն տըպագրութեան ի Մոլտաւիա:

#### ՓԵՏՐՈՒԱՐ

1. Սպարապետն Ռուսաց կոմս Փասքէւիչ երեսանքի մեռանի ի Վարշաւ քաղաքի ամաց 75:

8. Աստեղաբաշխն Շարոնոնք գտանէ ի դիտանոցէն Փարիզի գնոր մոյորակն Լետիտիա (Լէքիցիա):

15. Հենրիկոս Հայն՝ քերթող գերմանացի մեռանի ի Փարիզ:

18. Հրատարակումն ի Կոստանդնուպոլիս կայսերական հրովարտակին (*խաղլը հիւմայուն*), որով ոչ միայն ազատութիւնքն շնորհեալք հպատակաց հրովարտական Կիւյնանէի հաստատին, այլ եւ բազմապատիկ բարեկարգութիւնք պատրաստին հասարակաց:

— Աստեղաբաշխ զօրապետն Աստրիացոց Գուլիէմս Պիէլա մեռանի ի Վենետիկ:

25. Սկիզբն բանագնացութեանց դեսպանացն գլխաւոր պետութեանց եւրոպայ ի Փարիզ ի սակս պայմանաց հաշտութեան ընդ Ռուսս:

29. Դուք զինուց պատերազմի ի Խրիմ:

ՄԱՐՏ

10. Դեսպանը արքային Բրուսիոյ հրաւիրեալ մտա-

նեն ի խորհուրդ բանագնացութեան այլոցն պետու-  
թեանց, և հասանեն ի Փարիզ յ18 ամսոյս :

24. Յիշատակագիր մատուցեալ ի դեսպանեն Սար-



ՓԵՒԽՆԻՔ ՄԱՐԱԶԱՅՍ ԴՈՒԲՍ ՄԱՆԱԲՈՎԻ :

տենիոյ առ. պետութիւնս Դադղիացոցն և Անգղիա-  
ցոց՝ զոդորմ հանգամանաց հարաւային կողմանցն  
Իտալիոյ:

30. Դաշն ուխտի խաղաղութեան կռեալ ի Փարիզ

ի ձեռն դեսպանաց գլխաւոր պետութեանցն Եւրոպայ,  
որով վախճան Եղև արեւելեան պատերազմի: Եւ  
պայմանը դաշինն համառօտին այսպէս.

Յօդ. Բ, Գ և Դ. Երանել պատերազմական զօրաց

անյապաղ յիւրաքանցիւր տեղեաց գորս գրաւեալ ունեին :

Յօդ. Ե. Ե. Զ. Անյիշաբարութիւն առ հպատակս որ ի ժամանակի պատերազմին զկողմն բշմամեաց կալեալ իցեն, Ե. դարձ գերեացցն երկուստեք յազատութիւն :

Յօդ. Է. Ե. Ը. Օսմանեան պետութեան ընդ Էրոսպական պետութիւնս ի մի համար գրել, Ե. խոստումն ի դիմաց նոցին անկար պահպանութեան ինքնիշխանութեան նորին Ե. ամբողջութեան աշխարհին :

Յօդ. Թ. Յայտարարութիւն առ պետութիւնս հրովարտակին ազատութեանց շնորհելոյ յարքայէն Օսմանեանց առ հպատակս իւր, առանց տալոյ այնուօտար պետութեանց իրաւունս խառնելոյ ի ներքին տեսչութիւն իրաց աշխարհին :

Յօդ. Ժ. Անցքն Վոսփորի Ե. Գարդանեան կրճին փակեալ մնան ընդդէմ պատերազմիկ նաւաց ըստ ուխտի դաշանց 1841 ամին :

Յօդ. ԺԱ. Ե. ԺԲ. Անխտութիւն Սեա. ծովուն, որով համարձակ լիցի վաճառական նաւոց ամենայն ազգաց ծովագնաց լինել ինմին :

Յօդ. ԺԲ. Ե. ԺԳ. Խոստումն Ռուսաց Ե. Օսմանեանց՝ ոչ ունելոյ ի Սեա. ծովուն զինարան ծովային պատերազմական նաւոց :

Յօդ. ԺԵ. ԺԶ. ԺԷ. ԺԸ. Ե. ԺԹ. Ազատութիւն նաւարկութեան ի Դանուբ :

Յօդ. Ի. Ե. ԻԱ. Հատումն մասին իրիք Պեսարապիոյ Ե. յաւելումն ի Մոյտաիա :

Յօդ. ԻԲ. — ԻԺ. Խշխանութեանցն Վլադաց Ե. Մոյտաիոյ ազատութիւնս բազումս ունել ընդ պաշտպանութեամբ Էրոսպական տերութեանց :

Յօդ. Լ. ՅԱսիա նոյն մնալ սահմանացն ընդ աշխարհս Ռուսաց Ե. Օսմանեանց՝ որ ինչ Ե. յառաջքան զպատերազմն, Ե. որ այլն Ե. Ե. :

30. Գառաւանդորդ մոյորակ գոր դիտեաց ի Փարիզ աստեղաբաշխն Կոյտշմիր :

31. Յայտարարութիւն կայսերն Ռուսաց զհաշտութենէն Էդելոյ ի Փարիզ :

ԱՊՐԻԼ

4. Շփոք Ե. կոտորած քրիստոնէից ոմանց ի Նապլուսա, որ Ե. Սիւրքմ ի Սամարիա :

15. Սկիզբն Էլանելոյ Գաղղիացոց ի Խրիմն :

15. Առանձինն դաշնակցութիւն Գաղղիոյ, Անգղիոյ Ե. Աւստրիոյ իբրեւ ի պահպանութիւն ինքնիշխանութեան օսմանեան պետութեանն :

29. Ծանուցումն հրատարակեալ ի կայսերէն Ռուսաց յաղագս հանդիսի օծմանն իւրոյ Ե. բազաղրութեան, որ Էդէ. յամսեանն օգոստոսի :

30. Բանագնացութիւնք անգղիական պետութեան Ե. Միացեալ նահանգաց Ամերիկոյ սակս ապօրինա-

ւոր զօրաժողովոյն կամաւոր զօրականաց գոր արաբեալ համարէին Անգղիացիքն յԱմերիկա :

ՄԱՅԻՍ

2. Երգահանն գաղղիացի ԱտոյՖ Ատան մեռանի ի Փարիզ ամաց 55 :

15. Դաշնակցութիւն Անգղիոյ Ե. Գաղղիոյ Ե. Սարտենիոյ ընդ պետութեան Օսմանեանց, որով դաշնակիցքն խոստանան հանել զգորս իւրեանց ի սահմանաց աշխարհին ց30 հոկտեմբերի :

16. Գաղղիացիք դարձուցանեն առ Ռուսագրեւաւորսն Ե. զԿեօզլէվէ :

22. Ուղեւորել կայսերն Ռուսաց ի Վարչա. Ե. ի Պետրին :

— Դիւտ նորոյ մոյորակի ի ձեռն Կոյտշմիր աստեղաբաշխին ի Փարիզ, Ե. ի 25 ամսոյս Փնճսն աստեղաբաշխ անգղիացի գտանէ ի դիտանոցէն ՕրսՖորտի զայլ մոյորակ նոր (քառասներորդ երրորդ) զԹետիս :

— Պատմագիրն գաղղիացի Օգոստինոս Թիեռի մեռանի ի Փարիզ ամաց 61 :

27. Ներումն շնորհեալ ի կայսերէն Ռուսաց առ կամաւոր տարագիրսն լեհացիս հանդերձ հրաւիրանա. դարձի յիւրաքանցիւր հայրենիս :

28. Գահերէցն հասարակապետութեան Միացեալ Նահանգաց Ամերիկոյ յայտ առնէ դեսպանին Անգղիացոց Քրամփրընի Էրէ ոչ Ե. Ե. կարող Ե. նա կատարել զպաշտօն դեսպանութեան յԱմերիկա, Ե. զանցագիրսն տալ նմա՝ զի Էլեալ ի բաց գնացէ :

29. Զայրանալ գետոց ոմանց ի Գաղղիա Ե. ողողել զԼիոն, զԱւենիոն Ե. զայլ բազում տեղիս :

ՅՈՒՆԻՍ

1. Կայսրն Նափոյէոն լինքնին երբեալ ի տեղիսն ողողեալս ձեռնտու լինի բշտառացեւոց :

9. Կարդինալ Փարլիցի դեսպան ի դիմաց պապին հասանէ ի Փարիզ՝ մկրտել զկայսրորդին :

17. Խորհրդով ձերակուտին Գաղղիոյ սահմանին պայմանք խնամակալութեան աշխարհին Էրէ յանկարծ մեռանել հասանիցէ կայսերն մինչեւ ժամանեալ կայսերորդոյն ի չափ հասակի ուրուտան ամաց. Ե. յընամակալ Ե. կայսրութիւն, Ե. ի նորա պակասելն՝ այլ որ յարքայազանց Գաղղիոյ ըստ կարգի իրաւանց մերձաւորութեան :

24. Դաշնակիցքն Էլանէն ի Կերէ Ե. յենի գալէ. որ պէս Ե. ի 5 յուլիսի մարաշախտն Փէլիսի մեկնի ի Դամբլէ նաւատորման հանդերձ, Ե. զօրավարն Քնտրինկըն ի Պալըզաւայէ յ12 ամսոյն՝ հանդերձ մնացորդօր զօրուն Անգղիացոց :